ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀՄՆ-ՄԱԾՁԲ-18/04»

ՀՀ Գեղարքունիքի մարզ ք. Մարտունի «07» «02» 2018 թ.

Վարձատու՝ Ֆ/ա Գայանե Միերյան (անձնագիր AP 0563891, տրված 18.08.2016թ.
43-ի կողմից բնակվող՝ ք.Մարտունի, Գ.Նժդեհի փող. տուն. 13 հասցեում)
Վարձակալ՝ ՀՀ մշակույթի նախարարությանը ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս.Մուրադյանի
Սույն պայմանագրով վարձատուն պարտավոր է նշված վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սույն պայմանագրում նշված օբյեկտը:

Վարձակալության օբյեկտ
Անշարժ գույքի մակերեսը՝
շենք, շինություններ՝ 18 քմ.
Հասցե_ ք. Մարտունի, Գ.Նժդեհի փող. 14/1 բնակարան
Օգտագործման նպատակային նշանակությունը՝ գրասենյակ,

Ընթացիկ վերանորոգման պարտավորությունը և ծախսերը կրում է՝
վարձատուն:
Հիմնական վերանորոգման պարտավորությունը և ծախսերը կրում է՝
վարձատուն:
Երրորդ անձին ենթավարձակալության տրամադրումը՝
չի թույլատրվում առանց վարձատուի լրացուցիչ համաձայնության:
Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագրի վարձակալության օբյեկտի սեփականատերն է, օբյեկտը վաճառված կամ դատական վեճի առարկա չէ:
Վարձատուն երաշխավորում է, որ՝
սույն պայմանագրի վարձակալության օբյեկտը վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, արգելանքի տակ չի գտնվում.
վարձակալը տեղեկացված է սույն պայմանագրով նախատեսված վարձակալության օբյեկտի՝ այլ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու մասին:
Սույն պայմանագրով վարձատուն վարձակալի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված 24.01.2007 թ. N 2203815 գրանցման վկայականում նշված անշարժ գույքի միավորի՝ նախօրոք որպես առանձին գույքային միավոր չառանձնացված մասը որի հատակագիծը կցվում է սույն պայմանագրին և կազմում է դրա բաղկացուցիչ մասը:
Վարձավճար
Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը կազմում է 11340 դրամ:
Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով՝ ըստ տարվա օրացուցային եռամսյակների, ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 30-ը: Առաջին վարձակալական վճարումները կատարվում են ոչ ուշ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10 օրվա ընթացքում: Վերջին վարձակալական

վճարումը կատարվում է ոչ ուշ, քան պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 20 -ը:

Վարձավճարը վճարվում է՝

անկանխիկ 24117100016900 հաշվեհամարին:

Հողամասի վարձակալության դեպքում հողի կադաստրային արժեքի աճի դեպքում՝ վարձավճարը չի փոփոխվում.

Վարձակալը վարձավճարն ամբողջությամբ կամ մասնակի ուշացման յուրաքանչյուր օրվա համար

վճարում է տուժանք՝ վարձատուին չվճարված գումարի 0.01 տոկոսի չափով:

Պայմանագրի ժամկետը՝

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

07.02.2018թ.ից մինչև 20.12.2018թ.-ը:

Պայմանագրի ժամկետի ավարտին

պայմանագրի գործողության ժամկետի ավարտով կողմերի պարտավորությունները դադարում են:

Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է պայմանագրի կնքման պահին գործող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

Ստորագրությունները՝

Վարձատու՝ Գ. Միերյան

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Վարձակալ՝ Ս. Մուրադյան

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Սույն պայմանագիրը կողմերն ստորագրել են իմ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մարտունու սպասարկման գրասենյակի աշխատող՝ Էդիկ Դարբինյանի ներկայությամբ: Նրանց (նաև ներկայացուցիչների, եթե պայմանագրի կողմ հանդես են գալիս Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության համայնքը կամ իրավաբանական անձը) անունը, ազգանունը, ինքնությունն ստուգված են:

01.02.2018

(ամսաթիվ, ստորագրություն)